



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«14» Տեպտեմբեր 2015 թ.

N 77-Ա/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N 82-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման կիրարկումն ապահովելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 82-Ա/1 հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ լրացումները՝

1) հրամանի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ և 4-րդ ենթակետերով.

«3) մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 20-ը գործակալության տարածքային կենտրոններից ստանալ և նախարարություն ներկայացնել հաջորդ տարվա համար իրականացվելիք զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հայտ-առաջարկները, բացառությամբ Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրի հայտ-առաջարկների.

4) մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 20-ը ապահովել մարզպետարանների կողմից նախարարություն ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ հաջորդ տարվա համար իրականացվելիք Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրերի հայտ-առաջարկների ստացումը.»

2) հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված N 4 հավելվածի «V. Աշխատանք փնտրող անձանց թվաքանակի բաշխումն ըստ սեռատարիքային

կազմի և կրթական մակարդակի» աղյուսակի «Տողի համարը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Տողի համարը
բ
01
02
03
04
05
06
07
08
09
10
11
12
13
14
15

».

3) հրամանի 1-ին կետի 8-րդ ենթակետով հաստատված N8 հավելվածում բաշխման չափանիշների կշիռների բացատրությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի՝ ըստ մարզերի բաշխման Բ, Գ, Ե և Է չափանիշները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով այդ չափանիշների հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշները տվյալ տարվա հունիսի 1-ի դրությամբ:»:



Ա. ԱՍԱՏՐՅԱՆ